ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վեդի *17 սեպտեմբերի 2025թ.*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թվականի սեպտեմբերի 17-ին, ժամը 16:00-ին Վեդու համայնքապետարանի նիստերի դահլիճում (ք. Վեդի, Թումանյան 6), տեղի ունեցավ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի 2025 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու վերաբերյալ հանրային լսումներ:

Հանրային լսմանը մասնակցում էին Վեդի համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Հրավիրված հանրային լսումները վարում էր աշխատակազմի քարտուղար՝ Հ.Ստեփանյանը

Հանրային լսումների ընթացքն արձանագրում էր աշխատակազմի եկամուտների հաշվառման, հավաքագրման և առևտրի սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ.Քոչարյանը

1.Հանրային լսման օրակարգի թեման էր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Համայնքի ղեկավարի կողմից առաջարկված Վեդի համայնքի 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ելույթով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Հրաչյա Ստեփանյանը, ով ողջունելով հանրային լսման մասնակիցներին առանձնահատուկ կարևորեց հանրային լսումների միջոցով համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ապահովելու անհրաժեշտությունը և նշեց, հանրային լսման վերաբերյալ հայտարարությունը Վեդի համայնքի ավագանու 29.06.2024 թվականի N 69-Ա որոշմամբ սահմանված կարգով 15 օր առաջ նախապես հրապարակվել է

Վեդու համայնքապետարանի պաշտոնական՝ www.vedicity.am կայքում, սահմանված կարգով հանրային լսման վերաբերյալ հայտարարությունը առաքվել է համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարներին՝ տեղերում բնակչության շրջանում համապատասխան իրազեկում ապահովելու համար: Հայտնեց, որ հանրային քննարկումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք հնարավորություն են ունեցել հանրային քննարկման առարկայի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել մինչև 2025 թվականի սեպտեմբերի 12-ը, վերջիններս ուղարկելով հանրային ծանուցման մեջ նշված էլ.հասցեով, ինչպես կարող էին ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ նույն ժամկետում, սակայն նշված ժամկետում շահագրգիռ հանրության կողմից համապատասխան դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել:

Շարունակելով իր խոսքը, պարոն Ստեփանյանը նշեց, որ ելնելով այն հանգամանքից, որ համայնքը սոցիալ-տնտեսական առումով համաչափորեն զարգացած չի, ուստի նախորդ տարվա նման 2026 թվականի համար սահմանվել է «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով նախատեսված գոտիավորում:

2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հիմնականում մնացել են անփոփոխ՝ միաժամանակ հաշվի են առնվել «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի՝ 2021-2025 թվականներին կատարված փոփոխությունները:

Հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի և 12-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, ինչպես նախորդ տարի, այնպես էլ 2026 թվականի համար, տեղական տուրքերի սահմանված դրույքաչափերը գյուղական բնակավայրերում հիմնականում հաշվարկվել են 0.5 գործակցով, բացառությամբ սահմանամերձ և լեռնային բնակավայրերի, որոնց համար կիրառվել է նաև 0.3 գործակից, իսկ Վեդի քաղաքային բնակավայրի համար որոշ տեղական տուրքերի դրույքաչափերի համար սահմանվել են 1-ից մինչև 3 գործակիցներ:

Պարոն Ստեփանյանը նշեց, որ «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Վեդի համայնքում 2026 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը և արտոնություններ սահմանելու մասին» համայնքի ավագանու որոշման նախագիծը ընդունելու արդյունքում ակնկալվում է ապահովել համայնքի բյուջեի եկամուտների այն մասը, որը ձևավորվում է տեղական ինքնակառավարման մարմնի սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների և սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող պարտադիր գանձույթներից:

Քանի որ տեղական տուրքը տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ օրենքով սահմանված գործողությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է, իսկ տեղական վճարը՝ տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների շրջանակներում համայնքի կամ համայնքի պատվերով մատուցած ծառայությունների համար համայնքի բյուջե վճարվող՝ օրենքի դրույթների հիման վրա ավագանու սահմանած պարտադիր գանձույթ է և ուղղված է կարգավորելու տեղական տուրքերի և վճարների սահմանման ու գանձման հետ կապված հարաբերությունները:

Այնուհետև նշվեց, որ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի համաձայն՝ համայնքի բյուջեի ձևավորման աղբյուր են հանդիսանում նաև տեղական տուրքերը և

վճարները: Նշված դրույթը ամրագրված է նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում:

Հետևաբար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին ավագանու որոշման նախագծի ընդունումն ուղղված է համայնքի բյուջեի եկամտային մասի ապահովմանը:

Աշխատակազմի քարտուղար Հ.Ստեփանյանը նշեց, որ օրակարգում ընդգրկված հանրային լսման վերաբերյալ Վեդի համայնքի ավագանու որոշման նախագիծը կազմված է 2 հավելվածից, որից Հավելված 1-ը՝ Վեդի համայնքում տեղական տուքրերի տեսակներն ու դրույքաչափերն են 2026 թվականի համար, իսկ Հավելված 2-ը՝ Վեդի համայնքում տեղական վճարների տեսակներն ու դրույքաչափերն են:

Այնուհետև, խոսքը փոխանցեց աշխատակազմի Եկամուտների հաշվառման, հավաքագրման և առևտրի սպասարկման բաժնի պետ Մուշեղ Ղազարյանին, ով հայտնեց, որ 2026 թվականի համար նախորդ՝ 2025 թվականին հաստատված տեղական տուրքերի տեսակներն ու դրույքաչափերը փոփոխության չեն ենթարկվել, որոշակի փոփոխություններ են կատարվել միայն 2026 թվականի տեղական վճարներում, մասնավորապես.

1. Սահմանվել է տեղական վճար՝ Գոռավան, Այգավան, Եղեգնավան և Լուսառատ բնակավայրերում համայնքի կողմից առանց առևտրային հաշվառքի սարքերի (հաշվիչի), յուրաքանչյուր բնակչի ջրամատակարարման համար ամսական՝ 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ,
2. Հավելված 2-ի 8-րդ կետով սահմանված տեղական վճարների դրույքաչափերի համար սահմանվել է 50% արտոնություն՝ ա/ զոհված զինծառայողների ընտանիքների համար, բ/ մարտական գործողությունների ընթացքում հաշմանդամություն ստացած զինծառայողների ընտանիքների համար:
3. Սահմանվել է տեղական վճար՝ Համայնքային ենթակայության այլ մշակութային տների դահլիճների վարձակալման համար, որը ներառված է Հավելված 2-ի 14-րդ կետում,
4. Սահմանվել է տեղական վճար՝ Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար (եռամսյակի համար). 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:
5. Սահմանվել է տեղական վճար՝ Համայնքի սեփականություն հանդիսացող այլ շենք շինությունների վարձակալության համար՝ 1 քմ համար՝ 500 /հինգ հարյուր/ ՀՀ դրամ:
6. Սահմանվել են տեղական վճարներ՝ Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վրա բջջային կապի օպերատորների կայանների տեղադրման համար՝ (Լուսաշող, Լանջանիստ, Լուսառատ և Եղեգնավան բնակավայրերի համար կիրառել 0.75 գործակից)՝ 80000 /ութսուն հազար/ ՀՀ դրամ,
7. Սահմանվել է տեղական վճար՝ Համայնքի տարածքում մետաղադրամով և թղթադրամով շահագործվող ապարատների և վճարային տերմինալների միջոցով կազմակերպվող գործունեություն իրականացնելու համար, որը ներառված է Հավելված 2-ի 26-րդ կետում:

Ամփոփելով հանրային լսումը, աշխատակազմի քարտուղարը շնորհակալություն հայտնեց հանրային լսման մասնակիցներին և հորդորեց այսուհետ ակտիվ մասնակցություն ցուցաբերել նման հանրային միջոցառումների մասնակցությանը:

Աշխատակազմի քարտուղար՝ Հ.Ստեփանյան

Արձանագրող՝

ԵՀՀ և ԱՍ բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ.Քոչարյան

Վեդի համայնքի 2026թ-ի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը և արտոնությունները սահմանելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ 17.09.2025թ. տեղի ունեցած հանրային քննարկումների մասնակիցների ցուցակ

ք.Վեդի

17.09.2025թ.

h/h	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	[illegible]	[illegible]	[illegible]
2.	[illegible]	[illegible]	[illegible]
3.	[illegible]	[illegible]	[illegible]
4.	[illegible]	[illegible]	[illegible]
5.	[illegible]	[illegible]	[illegible]
6.	[illegible]	[illegible]	[illegible]
7.	[illegible]	[illegible]	[illegible]
8.	[illegible]	[illegible]	[illegible]
9.	[illegible]	[illegible]	[illegible]
10.	[illegible]	[illegible]	[illegible]
11.	[illegible]	[illegible]	[illegible]
12.	[illegible]	[illegible]	[illegible]
13.	[illegible]	[illegible]	[illegible]
14.	[illegible]	[illegible]	[illegible]
15.	[illegible]	[illegible]	[illegible]
16.	[illegible]	[illegible]	[illegible]
17.	[illegible]	[illegible]	[illegible]
18.	[illegible]	[illegible]	[illegible]
19.	[illegible]	[illegible]	[illegible]
20.	[illegible]	[illegible]	[illegible]
21.	[illegible]	[illegible]	[illegible]
22.	[illegible]	[illegible]	[illegible]